Միսաք Մեծարենց

Բյուրեղի դյութանք

Մանուկ մըն է, որ կայներ դեմն հըրածամ արևին,
կ’օծե հոգին իր շուշան լուսացնցուղ երազով,
ու կը ծըծե հոտևան խտղանքն ու դողն այգուն զով,
մինչ մեղեսիկ աչուկներեն Եսին ցոլքով կը վառվին:

Ներշուլագեղ ու պայծառ ցոլքով վճիտ իր Եսին՝
երկինքն՝ որուն հրճվանքի ակեր ունի կապուտակ.
ու կյանք սերն հորդած է հոն լեռնածին զերթ վըտակ՝
ուր կաթիլներ ու ցայտքեր հետզհետե կը հոսին:

Բյուրեղ մը կա ձեռքին մեջ՝ զոր կը ճոճե դարձդարձիկ,
յոթը գույնի տե՛նչն ունի, լույսի անհուն խաղերուն.
երանգներու, շողերու կ’ըղձա անուրջն օրորուն,
և արևին կը նայի միշտ կաթոգին ու բաղձիկ:

Ա՜հ, ի՜նչ դյութանք, ծիածան ծոպե՜ր ունի ամեն բան…
շափյուղակնե՜ր… կարկեհա՜ն… զյումրյո՜ւթ, շողակ ու թարշիշ…
ծովն է լեցուն գույներով ու ծիրերով ոսկենիշ,
ինչպես դաշտերն ու լեռներ, ինչպես մարմանդն ու ճամփան:

Ծափ կը զարնե, ծիծաղեն ծըլե՜ր է ծիրն իր այտին,
անո՜ւյշ արև մանկական, ամպ ու մեգի անգիտակ,
իմ երկինքս ալ կը հրճվի ոսկեծիծաղ լույսի տակ,

ու մոռացված բուրմունքներ գիս կըզգլխեն վերստին:

Պրիսմակ մըն ալ ե՛ս ունիմ, ու կը դիտեմ ցնծագին
սիրույդ արևը պայծառ, սիրույդ արև՛ը ջերմին,
ու խանդաբորբ իմ հոգիս հանդեպ անոր պաշտումին,
մանո՛ւկ մըն է, որ կայներ դեմն հրրածամ արևին…: